ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Մարգահովիտ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Մարգահովիտ	Ավագանու արտահերթ նիստ	07.05.2021թ.	15:30	**Մարգահովիտի** համայնքապետարանի նիստերի դահլիճում (գ. Մարգահովիտ, 2 փողոց 23)

ՆԱԽԱԳԻԾ 25-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 14-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

Մարգահովիտ հաամայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ. մայիսի 07-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Մարգահովիտ համայնքի ավագանու 2021թ.-ի մայիսի 07-ի արտահերթ նիստի.

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել 2021 թվականի մայիսի 07-ի թիվ 03 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Մարգահովիտ համայնքի ավագանու 2021 թվականի մայիսի 07-ի թիվ 03 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին
2. Մարգահովիտ համայնքի ֆուտբոլի մարզադաշտի և մինի մարզադաշտի անվանակոչման մասին
3. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն տրամադրելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 26-Ա

ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ
ԵՎ ՄԻՆԻ ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ԱՆՎԱՆԱԿՈՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18 հոդվածի 22 կետով՝

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

Մարգահովիտ համայնքի ֆուտբոլի մարզադաշտը անվանակոչել _____ _____ անվամբ և մինի մարզադաշտը _____ _____ի անվանք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

ՆԱԽԱԳԻԾ 27-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆՀԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Մարգահովիտ համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի,
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին.
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՍԱՄՎԵԼ ԱՆԱՆՅԱՆ**

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Մարգահովիտ համայնքի ավագանու

2021 թվականի մայիսի 07-ի N 27-Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՐԳԱՀՈՎԻՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Այվազյան Ելենա Հրայրի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,
2. Մարգարյան Նարինե Արամայիսի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,
3. Մարգարյան Անի Դավթի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,
4. Մարգարյան Ալլա Դավթի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,
5. Սարգսյան Հեղինե Գուրգենի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,
6. Սահակյան Աննա Նվերի - տաս հազար դրամ /երեխայի ծննդյան գումար/,

Ընդամենը – 60.000 / վաթսուն հազար/ դրամ:

ՄԱՐԳԱՀՈՎԻՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ _____ ԱՎԱԳ ԽԱՌԱՏՅԱՆ

(ստորագրություն)